

ISSN 0321-0405



# ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱԳՐԱՆԻ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԻՄ

*Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*  
*Социология, Экономика*  
*Sociology, Economics*

137.5

2012

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԵՆՍԱԿԵՐՊՈՇ

### ՎԱՅՆ ԱՍԱՏՐՅԱԼ

**Արդիականությունը:** ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորողների և դեռահասների շրջանում առկա են ֆիզիկական դաստիարակության հետ կապված բազմաթիվ խնդիրներ:

Ձևավորվել է անտարբեր վերաբերմունք առողջ կենսակերպի նկատմամբ, նվազել է սպորտային և շարժողական ներուժի կատարելագործման, սոցիալական և հոգևոր ակտիվության ձևավորման արդյունավետությունը:

Համեմատելով, օրինակ, ՀՀ և ՌԴ նույն տարիքի դպրոցականների շարժողական պատրաստվածությունը մի շարք ցուցանիշներով՝ ստանում ենք իրարից խիստ տարբեր արդյունքներ:

Դիտարկվել են երկու պետությունների 10-12 տարեկան դպրոցականների 100-ական հոգուց բաղկացած խմբերի արդյունքները (20մ արագ վազք, տեղից հեռացատկ), և ֆիզիկական ընդունակությունները տարանջատվել են ըստ սեռային գործոնի:

Ըստ այդմ՝ ՀՀ դպրոցականների շարժողական պատրաստվածության տվյալներն ըստ տարեթվերի անկում են ապրել՝ զիջելով ՌԴ-ի հասակակիցների տվյալներին: Հատկապես զգալիորեն նվազել են դեռահասների ուժային ընդունակությունները<sup>1</sup>:

Փորձագետների մեծ մասը գտնում է, որ իրավիճակի փոփոխության համար անհրաժեշտ է իրականացնել արդիականացման քայլեր՝ առաջադրելով կազմակերպչամեթոդական լուծումներ: Որպես առաջնային քայլեր մասնագետները նշում են նոր մեխանիզմների, մեթոդների, մանկավարժական և ստեղծագործական մոտեցումների առաջադրման կարևորությունը:

Գործող կրթական համակարգում ներդրված է ֆիզիկական դաստիարակության ընդհանրական դասընթացը, որը չի ներառում որևէ ծրագիր, որը հնարավորություն կտար դպրոցականների սպորտային ակտիվության խթանման և սպորտային պատրաստվածության ապահովման նպատակով ձևավորելու թիրախայնացված մոտեցում՝ ըստ գենդերային գործոնի<sup>2</sup>:

Այդ բացը լրացնելու համար ձևավորվել է արտադասարանային ֆիզիկական պատրաստվածության ավանդույթ և մշակույթ<sup>3</sup>, որտեղ հատկա-

<sup>1</sup> Տե՛ս **Ֆ. Ղազարյան**, Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգը, Եր., 2007, էջ 139 - 146:

<sup>2</sup> Տե՛ս **Лубышева Л. И., Бальсевич В. К.** Концепция физкультурного воспитания: Методология и технология реализации // "Физкультура: В.О.Т.", 1996, № 1, էջ 11-19, **Ֆ. Ղազարյան, Ռ. Մանուկյան**, Անձի ֆիզիկական կուլտուրայի ֆենոմենը, «Մանկավարժական միտք», 2004, № 1-2, էջ 23-27:

<sup>3</sup> Տե՛ս **Ֆ. Ղազարյան, Ա. Ստեփանյան**, Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի որոշ առանձնահատկությունները, // Մանկավարժական միտք, 2010, № 1-2, էջ 65-69, **Матросов В. Л.** Новый учитель для новой российской школы // "Педагогика", 2010, № 5, էջ 3-9:



պես շեշտադրվում են արդի մոտեցումներն ու ֆիզիկական պատրաստվածությանն ուղղված տեղական և միջազգային փորձը<sup>4</sup>:

Չնայած ՀՀ հանրակրթական դպրոցներում իրականացված հետազոտությունների մեծ քանակին, մինչ այժմ չեն իրականացվել ֆիզիկական դաստիարակության գործընթացի հարցերին առնչվող հետազոտություններ, որոնք թույլ կտային բացահայտել դպրոցականների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերաբերմունքը սպորտի նկատմամբ ընդհանուր առմամբ և ֆիզիկական պատրաստվածության նկատմամբ մասնավորապես:

Հենց այս գործոնով էլ կարևորվում է սույն հետազոտությունը: Հետազոտական եզրահանգումներ կատարելու առաջնայնությունը տրվել է երկու գործոնի՝ 1) թիրախայնացված լսարանի հետաքրքրությունը դպրոցում տարբեր մարզաձևերի ներկայացվածությանը, 2) առողջ ապրելակերպի և ֆիզիկական դաստիարակության կարևորության մասին գիտելիքների ու պատկերացումների մակարդակի բարձրացմանը:

2011 թ. 5-7-րդ դասարաններում դասավանդող ֆիզկուլտուրայի ուսուցիչների շրջանում իրականացված քանակական հարցման և հարցազրույցների միջոցով բացահայտվել է, որ դպրոցականների ճնշող մեծամասնությունը կցանկանար զբաղվել սպորտով, բայց դպրոցական ծրագրում ֆիզդաստիարակության պլանավորվածության, ստանդարտ և երեխաների առանձնահատկություններին չհարմարեցված լինելու, ինչպես նաև տարբեր մարզաձևերով զբաղվելու հնարավորության բացակայության հանգամանքները խոչընդոտող գործոններ են դպրոցում սպորտային կուլտուրայի ձևավորման համար, որտեղից էլ բխում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգի և մեթոդիկայի խոցելիությունը:

Դասընթացի նոր ծրագրեր կազմելու ընթացքում կարևոր է հաշվի առնել դպրոցահասակների ներուժը՝ ներգրավվելու տարբեր մարզաձևերով պարապելուն: Ձուգահեռաբար իրականացվող «առողջ ապրելակերպի» դասընթացն իր հերթին պետք է նպաստի և լրացուցիչ խթան հանդիսանա դպրոցահասակ պատանիների և աղջիկների շրջանում ձևավորելու սպորտով զբաղվելու մոտիվացիա, լինելու առողջ, գեղեցիկ և հաջողակ, գերծմնալու անառողջ ապրելակերպից և սոցիալական միջավայրի, ինչպես նաև տարբեր լրատվամիջոցների կողմից մատուցվող վարքի անառողջ տարբերակների կրկնօրինակումից:

Որպես հիմնական մեխանիզմ առաջարկվում է կիրառել հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության գործընթացի սպորտայնացումը: Այս դեպքում գործ կունենանք ոչ թե անհատական ցուցանիշների միայնակ ձևավորման, այլ խմբային ինքնուրույն դրսևորումների հետ: Թիմային խաղերի պարագայում երեխաների շրջանում ձևավորվում են ոչ միայն ֆիզիկական ունակություններ՝ թիմում իրենց զբաղեցրած դիրքի և թիմակիցների միջև հաստատվող միջանձնային կապերի շնորհիվ, այլև ներխմբային

<sup>4</sup> Տե՛ս Ա. Մարտիրոսյան, ֆիզիկական կուլտուրայի արտադասարանական պարապմունքների մեթոդիկան, թեկնածուականատենախոս. սեղմագիր, Եր., 2009, էջ 21:



հարաբերություններին հարմարվելու և թիմային ակտիվություն, համատեղ գործունեություն իրականացնելու ունակություններ և հմտություններ:

Հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացի կատարելագործման նպատակով նաև խնդիր է դրվել փորձագիտական հարցման միջոցով պարզելու ակադեմիական դասացուցակում ֆիզկուլտուրայի դասերը տարբեր մարզաձևերով փոխարինելու անհրաժեշտությունն ու հնարավորությունները: Հետազոտության ընտրանքում ներգրավվել են 33 մարզերի և Երևանի հանրակրթական դպրոցների ֆիզկուլտուրայի 80 ուսուցիչներ՝ հաշվի առնելով տարիքային և աշխատանքային ստաժի գործոնները: Մասնակից ուսուցիչների միջին տարիքը կազմել է 34,3, իսկ մանկավարժական աշխատանքի ստաժը՝ միջինը 10,8 տարի:

**Արդյունքները և դրանց վերլուծությունը:** Արդյունքները ցույց տվեցին, որ հարցվողների մոտ 50%-ը անհրաժեշտություն է տեսնում ավելացնելու ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամաքանակը: Մնացյալ կարծիքները բաշխվել են հավասարապես՝ դասաքանակից բավարարվածների և դասաժամերի պակասին միտվածների միջև: Եթե նկատի ունենանք, որ վերջին երկու խմբի ներկայացուցիչների դպրոցների 55%-ում վճարովի հիմունքներով իրականացվում են արտադասարանային պարապմունքներ, ապա կտեսնենք պատասխանների վրա այդ գործոնի էական ազդեցությունը:

Կարող ենք եզրակացնել, որ դպրոցականների մեծ մասը զրկված է դպրոցում տարբեր մարզաձևերով զբաղվելու հնարավորությունից, և որպես այլընտրանք դպրոցների միայն որոշ մասն է առաջարկում արտադասարանային, այն էլ վճարովի, պարապմունքներ: Դրա հիմնական պատճառներից են հայաստանյան հասարակությունում սպորտով զբաղվելու անհրաժեշտությունը չգիտակցելն ու անտարբերությունը, համահասարակական առողջ ապրելակերպի մշակույթի բացակայությունը, ինչպես նաև վճարովի սպորտային ծառայություններից օգտվելու դժվարությունը, նաև՝ ընտանիքներում երեխաների սպորտային ունակությունները զարգացնելու գործընթացում ծնողների պասիվ դերը:

Դպրոցականների շրջանում առավել ընդունված մարզաձևերն են բասկետբոլն ու վոլեյբոլը (38,7%), սեղանի թենիսը և աթլետիկան (16-18%), մարմնամարզությունը (20%): Դպրոցականները ակտիվ զբաղվում են նաև ֆուտբոլով, շախմատով, հանդբոլով, կարատեով: Այս մարզաձևերով դպրոցականների զբաղվելը հիմնականում պայմանավորված է դպրոցներից դուրս գործող մարզադպրոցներ և մարզական ակումբներ հաճախելով: Պարզվել է, որ համապատասխան պայմանների առկայության դեպքում ուսուցիչները, որպես արտադասարանային պարապմունքներ, կնախընտրեն այնպիսի մարզաձևեր, ինչպիսիք են վոլեյբոլն ու բասկետբոլը (56-64%), սեղանի թենիսը (38,7%), մարմնամարզությունը (26,2%), հանդբոլը (18,7%), ինչպես նաև՝ ըմբշամարտը, դահուկային սպորտը (5-11%): Մարզաձևերի նման բաշխվածությունը մեկնաբանվում է դպրոցներում



մարզադահլիճների մարզագույքով զինվածության ցածր մակարդակով: Հայաստանյան դպրոցների մեծ մասում օգտագործվում են դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակ կառուցված մարզադահլիճները, որոնցում գերակշռում են բասկետբոլի դաշտերը: Չնայած ֆուտբոլի նկատմամբ վեր. ռերմունքը փոխվել է ՀՀ հավաքականի վերջին շրջանում ունեցած հաջող. թյունների շնորհիվ, այնուամենայնիվ, ֆուտբոլի դաշտերի ստեղծումը մեծ խնդիրների առջև է կանգնեցնում դպրոցների ղեկավարությանը, քանի որ վերջիններս ստիպված պետք է լինեն մշտապես հետևել բաց սպորտային հրապարակներին, որը անհնար կլինի օգտագործել եղանակային անբավարար առաջաններում: Բասկետբոլի պարագայում այս խնդիրը չի ծագում:

Հայաստանի դպրոցներում առողջ ապրելակերպի սերմանման և սպորտային դաստիարակության ապահովման անբավարար մակարդակը ուսուցիչները բացատրում են նյութատեխնիկական բազայի բացակայությամբ, տնօրինության շրջանում համապատասխան ցանկության և նախաձեռնողականության բացակայությամբ, արտադասարանային պարապմունքները չվարձատրելու փաստերով: Հարցվողների շուրջ 70%-ը դրականորեն արտահայտվեց դպրոցական և արտադասարանային սպորտային պարապմունքների համադրման մասին, իսկ 23%-ը դրսևորեց բացասական դիրքորոշում: Առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացնում բասկետբոլը՝ որպես սպորտային կուլտուրայի ձևավորման մոդել: Այն, ըստ հարցվածների, նպաստում է տարբեր շարժողական ունակությունների ձևավորմանը (50%), տարածության զգացողությանն ու աչքաչափի զարգացմանը (32,5%):

Եվ վերջապես, մասնագետների 70%-ից ավելին ընդունեց հանրակրթական դպրոցներում նախկինում գոյություն ունեցած, այսպես կոչված, «մարզական» դասարանների վերականգնման անհրաժեշտությունը:

**Եզրակացություններ:** Անցկացված հետազոտության հիման վրա կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

1. ՀՀ հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ է ներմուծել ֆիզկուլտուրայի դասի սպորտայնացված մեխանիզմ՝ ըստ աշակերտների հետաքրքրությունների, կարողությունների և սեռատարիքային առանձնահատկությունների: Դա հնարավորություն կտա ստեղծելու առողջ ապրելակերպի միջավայր, որը կնպաստի սպորտի դերի կարևորության ընդգծմանը, կխթանի սպորտային կուլտուրայի զարգացմանը դպրոցահասակների շրջանում:

2. Անհրաժեշտ է խթանել դպրոցում թիմային մարզաձևերի զարգացումը, ինչը կնպաստի դպրոցականների շրջանում համատեղ գործունեության և նպատակաուղղված ակտիվության հմտությունների ձևավորմանը, ներխմբային հաղորդակցման զարգացմանը, թիմում լինելու և ընդհանրական նպատակներին ձգտելու կարողության դաստիարակմանը:



**ВАГАН АСАТРЯН – Спортивный образ жизни армянских школьников. –**

По итогам социологического опроса, проведённого среди учителей физической культуры, сделан вывод о значимости внеклассных секционных занятий разными видами спорта. В частности, было уточнено место, занимаемое в этой системе баскетболом. Кроме того, признано необходимым восстановить так называемые спортивные классы, в частности баскетбольные, которые существовали ранее в общеобразовательных школах.

**VAHAN ASATRYAN – The Sporting Lifestyle of Armenian Schoolchildren. –**

As a result of sociological survey of the teachers of physical training a conclusion has been drawn about the importance of extracurricular sectorial trainings on different kinds of sports. A special vital role of basketball in the system of the classes of physical culture has been defined. It has been acknowledged to restore the so-called "section sports" classes at general public schools and basketball classes in particular.